ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 749-Ա « 14 » մայիսի 2026 թ.

ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 78-րդ հոդվածի 2-րդ մասով և հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի 2026 թվականի ապրիլի 15-ի հ. 1976-Ա որոշումը, ինչպես նաև հաշվի առնելով «Տուրիզմի Հայկական ֆեդերացիա» ՀԿ-ի նախագահի 2026 թվականի ապրիլի 7-ի հ.Դ-34197-26 գրությունը.

1. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ-գլխավոր ֆինանսիստին՝ Երևան քաղաքի 2026 թվականի բյուջեով, Երևանի քաղաքապետարանի (առանց Երևանի վարչական շրջանների) մասով, բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 04 բաժնի, 07 խմբի, 03 դասի «Զբոսաշրջության զարգացում» ծրագրով և տնտեսագիտական դասակարգման 4819 «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» հոդվածով նախատեսված գումարներից «Տուրիզմի Հայկական ֆեդերացիա» ՀԿ-ին հատկացնել 17000.0 հազար (տասնյոթ միլիոն) ՀՀ դրամ՝ ս.թ մայիս ամսին ՀՀ Էկոնոմիկայի նախարարության և Զբոսաշրջության կոմիտեի կողմից «Wizz Air» միջազգային ավիաընկերության հետ համատեղ իրականացվող և համաշխարհային շուկայում Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի պատշաճ ներկայացմանն ու խթանմանը նպաստող նախաձեռնության շրջանակում ՀՀ այցելող շուրջ 160 հյուրերի՝ Երևան քաղաքում գիշերակացի և հյուրընկալության ապահովման համար ֆինանսական աջակցություն ցուցաբերելու նպատակով:

2. Լիազորել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի և տուրիզմի վարչության պետին՝ կնքել նվիրատվության պայմանագիր:

3. Սույն կարգադրության կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի և տուրիզմի վարչության պետի վրա:

4. Կարգադրության կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետի տեղակալ Լ. Հովհաննիսյանի վրա:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ, ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

X

ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

Signed by: PAMBUKHCHYAN ARMEN 3611840246